Արձանագրություն 3

ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/63 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.11.2019թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Ստեփան Ղազարյան /գնահատող/

Սերոբ Գևորգյան /բացող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին
(Կարեն Սիմոնյան)

1.1 «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը (տեղեկությունները):

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

2.1 «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 Թիվ 3.1 Հավելվածը լրացված է թերի՝ բացակայում են սարքերի արտադրության տարեթվերը: Բացակայում են պահանջվող սարքերի ձեռքբերումը կամ դրանց նկատմամբ սեփականությունը հավաստող փաստաթղթերը:

2.1.2 Ներկայացված Հավելված 3.2-ում հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների աշխատանքային փորձին վերաբերող ժամանակահատվածը և գործունեության ոլորտն ու կատարած աշխատանքը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

2.1.3 Ներկայացված հիմնական աշխատակազմում ներառված որմնադիր-վարպետի հետ կնքված պայմանագիրը վերաբերում է 2018թ. իրականացվելիք աշխատանքներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունների մասով «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց ս/թ նոյեմբերի 6-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ հասցեում

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կարեն Սիմոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
	Ստեփան Ղազարյան /գնահատող/
	Սերոբ Գևորգյան /բացող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

5. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, հայտը գնահատելու և գնահատման արդյունքների մասին

(Կ. Սիմոնյան)

5.1 «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունները:

5.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կ. Սիմոնյան /նախագահ/

---------- Հ. Հովսեփյան

---------- Ս. Ղազարյան

---------- Ս. Գևորգյան

---------- Ա. Ստեփանյան

---------- Ա. Սողոմոնյան /քարտուղար/